Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

10633
10634
10635
10636
10637
10638
891.99
Խ-26

10637

# ՍՓՈՓԱՆՔ ՌԱՄԿԻՆ

*Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յեր-կիր ուստի առար. Ծննդ.*

ԳՐԵԱՑ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

معارف نظارت جلیله‌سنك ۳۰۰ نومرولی رخصتنامه‌سیله
طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐԵՒԵԼՔ» ԵՒ «ՄԱՍԻՍ»
ԼՐԱԳՐԱՑ

1888

ՍՓՈՓԱՆՔ ՌԱՄԿԻՆ

2573

# ՍՓՈՓԱՆՔ ՌԱՄԿԻՆ

891 · 99

Քրտամբ երեսաց քոց կերիցես
զհաց քո, մինչեւ դարձցիս յեր-
կիր ուստի առար · Ծննդ ։

ԳՐԵՑ

Մ · ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

معارف نظارت جليلهسنك رخصتنامهسيله طبع اولنمشدر

Կ · ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐԵՒԵԼՔ» ԼՐԱԳՐՈՅ

—

1888

7771-57

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

—

Կոյր բաղդը մունչելով գետնահարեց զիս, այլ ես երգելով կանգնեցայ. իմ քնարս աշխատութեան ի ներքող լարեցի, եւ իմ անպարուեստ երգերս անուս գործաւորին ուղղեցի։

Ե՛լ, Հայ գործաւոր, գօտէպնդէ. Թող գոռան դարբնոցին մուրճն ու սալ, Թող խեղդեն գանգատն ու տրտունջ։

Ի՛նչ, միթէ վայելք չէ՞ տեսնել կկոցին արագ երթեւեկը ոստայնանկին ժիր ձեռաց մէջ, կամ ճախարակաց անդուլ ճախրելը չը հոլովեր տանիր ի մէնջ մեր հոգն ու թախիծ։

Դեռ չըկայ մի դար, լսեցէք ո՛վ Հայեր, մեր ազնիւ հարց ճակատէն յորդահոս մի գետ կը բղխէր քրտանց, ո՞ւր մնացին այն դիւցազունք վաստակոց, ո՞ւր է Պէզճեան եւ մահտէսի Տատ ամիրայն։

Աշխատաւորին ճակատն է բաց, դէմքն է ժպիտ, աչքն է վառվռուն. Նա չը գիտէր թէ ինչ է ոճիր, եղեռն զզուանք կազդէ իւր սրտին եւ կը խորշի օրինաց դէմ գործելէ։ Իւր խաղաղ տան մէջ կը բնակին առատութիւն, սէր եւ միութիւն։

Շատեր երգեցին սէր, գինի, այլ ինչ, բազմից լսեր եմ շանթել, որոտալ. բայց ո՞վ բնաւ յիշեց զսեաւ սուգ ռամկին որ եւ կուշտ պատառ կերակուր չո՞ւնի։

Յոխորտանք ցնորից, դուք չէք ինծ համար, ոչ ալ ունիմ ես քնար վավաշոտ. ծկնորս, բաղնեպան, ստնտու, սայլորդ մենուկ կը սգան չունին մխիթար։

Ո՛հ որ չեմ կարող տուն տալ տնանկին, ոչ յագեցնել մի մարդ անօթի. այլ կառաջնորդեմ զայն աշխատութեան որ տնանկին տուն՝ նօթի մարդոյն հաց կուտայ, եւ կուտայ առաւելապէս։

Այո՛, անարգեալ ռամկին ապաւէնի ամրոցը, զրկեալ գործաւորին պաշտպանութեան զօրավիգը՝ աշխատութի՛ւն, աշխատութի՛ւն, օրհնեալ աշխատութիւնն է միայն։

Իմ քնարս ուրեմն թող յաւէրժացնէ ի դարուց ի դարս զայս իմ քաջալեր եւ խրախոյս առնու իմ երգոցս ի լուր վհատ գործաւոր։

Երկնից վեհ բարձունքն ունին զսէգ արծուի, մուսայից դասն ալ բարձրաթռիչ հանճար. անծանօթ հովիտն ունի զիւր պլուլպիւլ եւ անոք ռամիկն ալ զիս, հէգ պուէտս։

Ուստի երգոցս վարժն ինծ շատ մի տեսնէք, եւ ո՛վ վեհ մուսայք, իմ համբակ քնարին թոյլ տուք թրթռալ 'ի սփոփանս ռամկին։

10 Մայիս 1888
Կ. Պոլիս

# ՍՓՈՓԱՆՔ ՌԱՄԿԻՆ

## ՊՈՒԷՏԸ ԱՌ ՌԱՄԻԿԸ

—

Ո՞վ չը սփոփուիր, ո՞ր սիրտ նուաղ,
Քնարս ունի ուրախ մի լար.
Երգոցս ի լուր գտիր խաղաղ,
Երգէ և դու, Ռամիկ, մի՛ լար։

Լացող աչուի գլխիկ կըքող,
Խոժոռ ժանիք, տրտունջ շրթեր՝
Նոցա վերայ իմ ձեռքն ի քող
Կը ցրցքնեն բոյլ բոյլ վարդեր։

Արի՛, Ռամիկ, արի՛, գործէ.
Ո՛հ, թող դադրի տրտունջն անյուշ։
Ե՛ւ, թող երկոց սէրն արծարծէ
Իմոյ քնարին նուագն անուշ։

Ձկնո՛րս, դերձա՛կ, հո՛վիւ, այգո՛րդ,
Սոքա են, ո՛հ, կենաց բաժին
Ամօթ է կեալ ծոյլ, պարապորդ.
Ձեռք քո, կանուխ գործել վարժին։

Այո՛, վարժէ կրել հեշտիւ
Ճակատագրին դատակընիք·
Քրտամբ ճակտին գիշեր և տիւ
Թող հաց ճարեն այր թէ կընիկ։

Այն որ հոգի կուտայ կաւին,
Ծունչն 'ի ունգունս կանգնէ քեզ մարդ·
Նոյն Աստուածն է որ տակաւին
Կանգնէ բաղդին դէմ քեզ 'ի մարտ։

Հոս թոյլ դադար չիք հոգնածին,
Այլ թէ վատիմք, անշուշտ կորանք։
Քրտանց բերկրանքն են յոգնածին,
Վարձք ծուլութեան՝ ամօթ, կորանք։

Սիրտս 'ի բոցբոք, 'ի հուր վառի·
Գործէ, Ռամիկ, ե՛լ, մի՛ խիթար,
Ես քո սիրոյդ քնարս առի,
Խըռով ոգւոյդ տամ մըխիթար։

Ցնծա՛, քընար և ամէն հեղ,
Ե՛լ, բարձրացո՛ւ, մաղթանք սրտին
Երբ հառաչէ շուրթ տրտմաղեղ
Կենաց՝ ընկճեալ յայս գոռ մարտին։

Եւ երբ հոգնած յայսմ աշխարհի
Զաչս անձկանօք ուղղէ 'ի վեր,
Ստանալ կապոյտ անհուն երկնի
Ռամիկն առնու յուսոյ թեւեր։



## ՖԻԶԻԳԱ ՊՕՂՈՍ ՎԱՐԺԱՊԵՏ

—

Դադրին պիտի ցաւեր որ գիս տոջորեն,
Ո՜վ սիրտ, և դու հանգչիս պիտի քիչ օրէն։
Վաստակաբեկ ալ ոյժ չունիմ քալելու,
Ննջեցելոց՝ այժմ ինձ են պէտք ալելու·
Այլ ո՜հ, կենացս թող երկարի վերջնալոյս,
Եւ խօսելու թող թոյլ տրուի եղկելւոյս·
Վարժապետնե՛ր, ինչո՞ւ տրտմիք վշտակիր,
Նոյն իսկ և գիս, ո՜հ վարեցին տարագիր
Այլ Ֆիզիգա թշուառ Պօղոս Վարժապետ
Զը կանգնեցաւ առնուլ զազգն իւր դատափետ,
Զի թէ Սոկրատ ահիւ ըմպէ մոլախինդ
Զէ՛ դահիճն այր տրտում դէմքէն ցոլայ խինդ։
Նա « ֆէ-տէյ » անհաշտ կրիցն է գործիք,
Զայն մարդասպան զուր կենթադրէ թիւր կարծիք
Եւ ի՞նչ ընէ հայրենիքն իւր, վեհն Աթէնք։
Մի՛, մի՛ գուցէ տարապարտ զազգ մեր առեմք·
Ո՜հ որդեակներ, մօտ եկէք իմ խշտեկին,
Ես նոր Սոկրատ կարեկցեցայ միշտ հեգին,
Մինթէ կընա՞ք թողուլ սան ձեր սիրասուն,
Անուս մեծնալ իբրեւ անբան անասուն·
Նոցա սիրոյն չըմաշեցա՞ւ ձեր ոգին,
Դուք չէ՞ սիրեր զանոնք 'ի սէր կաթոգին։
Մի՛, մի՛ յիշէք, սափեստ որեարն ու փքրուկ
Անոնք արեան ծարաւած զազիր են ագրուկ

Եւ գայլերու սովեալ վոհմակ ոռնացող
Երաշտ երկիր զոր ոռոգել մոռնայ ցօղ։
Եթէ մեռնիմ, կենացս յետին այն րոպէն,
Աչքս իմ անոյշ աշակերտներս ամփոփեն
Եթէ մեռնիմ, ես իրենց զոհ թող երթամ,
Վարժապետին ի՞նչ փոյթ՝ կեանք ճոխ ու փարթամ.
Եթէ մեռնիմ, տապանագիր չեմ ուզեր,
Փառըս ծածկեն չան խաղողի չոր կուզեր·
Եթէ մեռնիմ անունս անյայտ չը մնար,
Որ մ՚իս կերգէ վարժապետի մի քընար։
Եւ եթէ դո՛ւք, վարժապետներ, դո՞ւք մեռնիք,
Պիտի ձեր մութ փոսէն յերկինս սաւառնիք
Ուր Ցիգիգա թշուառ Պօղոս վարժապետ,
Անդէն ունիք ձեզ ուղղեցոյց, կարապետ։



# Ի ՄԱՀ ԱԻԱԶԱԿԻՆ

—

Միթէ Տաւրոս, ընդ կիրճս թիւր,
Ուր լեռ. կողերն իւր ճըղէ·
Խըրոխտ գողին չը՛տար դիւր,
Որ ճամբորդին կեանք սըղէ։

Այլ մռայցօնք թէ քողեն,
Ձանյիշատակ իւր ոճիր,
Երկինք խնդրէ վրէժ գողէն,
Պատուհասէ զիւր նախճիր·

Ի վախս լերանց մի փապար
Ապառաժուտն էր ճեղքեր,
Ուսկից հեղեղ ուժգնաբար
Թաւալ գըլոր կը ժայթքէր։

Բազմահառաչ ի ջուրս անդ
Կը կանգնէին ժայռեր ցից·
Գողն անդ կանգնէր սիրտն 'ի խանդ,
Ուղեւորաց ճամբուն կից։

Եւ անարեւ ձորն 'ի վար
Մարմնով կիսով կը ծըռէր·
Թէ ո՞ւր գտնէ որս յաւար՝
Ձերթ սէգ արծուի կորոնէր։

Դուն գիտեմ կուզես լինալ
Իբըր չանթ դու ամպրոպաց ,
Մութ պատել չուրջն որոտալ
Հեռաւոր խոնչ ճամբորդաց ։

Ինչո՞ւ երկինքն ամպոտ է ,
Աստղերն ինչո՞ւ չեն փայլիր ·
Աւազակ գիշերդ մօտ է ,
Սթափէ՝ որջդ ելիր ։

Վե՛ր նայէ , վե՛ր , երկինք մութ ,
Ամպերն ինչպէ՛ս կուտակին ·
Այս է մահուանդ կնիքն անգութ ,
Հերի՛ք օրերդ երկարին ։

Ա՛հ , վե՞րն , հողմոց բուռն երկունք
Իրար եկան գոռացին ·
Անսանձ կատղած կայծակունք
Յանկարծ զամպեր փառեցին ։

Մէյ մ՚ալ չանթ մը շեշտակի
Գողին գըլուխ ջախջախեց ,
Ալ հարկ չըկար փոթորկի ,
Երկինք ըզվրէժն իւր լուծեց ։

Եւ հեւալով ամպոց տակ
Հողմախաղաղ հանգչեցաւ ·
Եւ կամարն իւր կապուտակ
Այգամօտին պարզեցաւ ։



Եւ լոյս աւուրն արեւ նոր ,
Ճաճանչելով անդադար ,
Ցից ժայռեր , ջուր , փախ բոլոր՝
Նըշողէր թիւր կիրճն ու դար ։

Ռամիկ , թէ եւ լեռն ըլլաս
Ազատ չարիք գործելու ,
Աստուած մը կայ հոն գիտնաս
Պատրաստ զքեզ պատժելու ։

## ՁԿՆՈՐՍՆ Ի ԳՈՒՄԳԱԲՈՒ

—

Գատը-գիւղի բացը՝ խըռով Մարմարա ,
Նաւառաջքն ալեհերձ՝ ցասմամբ փրփըրայ ·
Եւ շողշողուն աստղեր երկնից կամարին
Հատիկ , հատիկ մեղմիւ ահա կը մարին ·
Ահա և սեաւ ամպեր վարին ըստ քըմաց,
Դա են լուսնոյ մահիկն արդ կամաց կամաց ·
Մօտս Պուռնին քողի , խաւարի փարոս
Վախնամ յանկարծ զարթնու մրրիկ բարբարոս ։
Ի՜նչ . գոնէ գիշերս այս որսալ թոյլ չե՞ս տար ,
Ինչո՞ւ , ո՜վ ահեղ ծով , ծըփաս անդադար ։
Թէ հին ոխդ անիրաւ դժուարիս մոռնալ ,
Ուսի՛ր , բաժինդ է միայն անվրէժ ոռնալ ·
Զի , տե՛ս , հազիւ մթնեց որ հայր ու զաւակ
Անհամբեր , դահուկէն իջուցինք զնաւակ ։
Զայն թիւնիկ որսալու մըխեցինք 'ի լիւղ ,
Մինչ 'ի հոս մեզ չազդեց փրփըրալդ երկիւղ ։
Լայնափոր նաւակը հեւալով իջանք ·
Կո՛յր բաղդ , ա՛լ հերիք չէ՞ , ի՜նչ են այս տանջանք ·
Սիրտ առ , ծերուկ հայր իմ , ուսիս վրայ դիր
Հողմակոծ գլխիկըդ ալ մի գանգատիր ։
Թող փրփրադէզ կոհակք մըռնչելով գան ,
Թող տարուբեր նաւը կուլ տալ սպառնան ,
Թող ալիք ջուր սրսկեն ծովէն ահարկու ,
Ինչո՞ւ ստացայ ես զայս թեւեր հուժկու ·



Ինձ վստահէ կեանքդ , հա՛յր իմ , մի՛ վախնար ,
Պինդ են դնդերք բազկացս , ես եմ ղեկավար ·
Փըլած բերդը հոն է , չէ ցամաքն հեռու
Թիակի հարուած մ'ալ հասանք Գում-Գափու ։
Այլ անյատակ անդունդ մեզ իւր ծոցն առաւ
Մութ էր ալետանջ ծով , հեռուն չըկար լոյս ,
Ցողդողդ ծալքերովն իւր մեզ յառաջ տարաւ
Հոն էր գերեզմաննիս , փրկել չը կար յոյս ։
Պիտի մեռնիմ գիտեմ մահն ինձ համար է ,
Սակայն չէ թէ այս օր , ո՜վ մեծ բնութիւն ·
Քու անզօր ալիքդ 'ի զուր յամառ է ,
Այս օր ղէկն իմ ձեռքս է , պիտի պարտիս դուն ։
Գում-Գափուի դուրսը կայ մի ցից պարեխ ,
Թումբին մօտ , ուր կպրեն հին նաւ , կուր , մակոյկ ·
Ջուրն վերցուց հոն նետեց իբր ընջին մըղեղ ,
Զարկաւ , փշրեց մեր նաւ , ցրուեց և զիւր գոյք ։
Ուռկաններ , խարիսխ , ճանկ ու կաղմած նաւուն ,
Ա՜հ , ամէնք կուր եղան փրփրադէզ ծովուն ։
Կշտացա՞ր , անյագ ծո՛վ , վրէժդ առի՞ր , գոհ ե՞ս ,
Ե՛լ , խորխտացիր ուրեմն ալ ուզածիդ պէս ·
Ե՛լ . . . ալ փո՞յթս է թէ ծով կողոպտէ զիմ գանձ ,
Հայրն իմ ահա զերծաւ տարերացն անսանձ ։
Ե՛կ , կոթընէ ուսիս , հա՛յր , անվախ քայլ առ ,
Ճեղքէ լանջօքդ կողերն կատղած ջրերու
Փարատեցաւ մութը , տես կանթեղն է վառ ,
Հասանք մեր հիւղ կըրող կարկառ ժայռերու ։
Խեռ ծով , հոս է սահմանդ , խոյս տուր դահավէժ
Կարծես զուրկ ի նաւուս վըհատ եմ յաւէժ ,
Կամ թէ հոգս է ճղփիւն , ծըփանք , դառն ալիք ։

Գում-Գափուցին ծաղրէ քո փուճ սպառնալիք ·
Վաղը դարձեալ մըխեմ նաւն ի ծով հաչող ,
Չի հողմն ինձ նըպաստ է , ամբուքն ինձ յաջող ·
Եւ ցորչափ խարխուլ հիւղս կանգնի ծովուն դէմ ,
Քու կոհակներդ իմս են զոր պիտի դնդեմ ։
Այլ նուաճեցաւ ծով ալիք նուաղին ,
Կեցցե՛ն Գում-Գաբուցիք , երնե՛կ նաւաղին ։
Ձկնո՛րս , ձկնո՛րս միայն՝ և յորդւոյ որդի ·
Մեր յաղթ թիերուն տակ ծովն պիտի պարտի ։
Կա՞յ մի նըման արհեստ սիրուն վառել ի տենչ ,
Կա՞յ մի դասալիք ոք և ցայս վայրն ի մէնջ ։
Անկախ յազդեցութեանց իմ անձիս իշխան ·
Կը ճարեմ ապրուստս յորդ քրտանց փոխան ,
Ուստի կերած հացս ինձ շնորհ չեմ սեպեր ,
Այլ խիստ կենացն իմ վարձք , վաստակն անեպեր ։
Աշխատութիւն սուրբ է , սուրբ կենաց պայման
Հայ գործաւոր գոհ լեր , ձկնորսիս նըման ։



## ԲԵՌՆԱԿԻՐՆ ՈՒ ՊՈՒԷՏՆ

—

Ո՜վ Մըշեցի բեռնակիր ,
Ի՞նչ հոգ ունիս , ցաւդ ի՞նչ ·
Տրտմութեամբ մի՛ համակիր ,
Վար դիր համեստ ու հանգչէ ։

Լուր կորիճ , յայսմ աշխարհի
Զոյգ կը ծըլի փուշն ընդ վարդ ·
Չարեացն ալ վերջ գայ բարի ,
Դիւր կը գտնէ ցաւոց մարդ ։

Այլ ո՜վ բընաւ չունի բեռ ,
Թէ բեռն ճնշէ սոսկ ուսիդ ,
Քանի՛ , քանի՛ք դիտեմ դեռ
Ոյց ընդ բեռամբ ճմլի սիրտ ։

∴

Թիկանցս՝ համեստ ճնշէ թող ,
Շուրթն իմ գանգատ դեռ չունի ·
Բեռն այն ծընգացս չըտար դող ,
Թեթեւ է զերթ թռչունի ։

Այլ անձկացեալ սրտիւ սէր
Ո՞ւր մնացիք հէգ որդեակք ·
Մաքսատուն գալըս ի վեր
Աչերէս անյայտ եղաք ։

Աշխարքին բեռն կըրեցի,
Այս բեռ սրտիս ծանր եկաւ.
Ձենէ կարօտ մընացի,
Պանդուխտ հիւծիմ ու տակաւ։

⁂

Ո՛հ զաւկընե՞րդ . . . բեռնակիր,
Հայր ե՞ս որդւոց նորատի։
— Այս է ճակտիդ վերնագիր,
Զաւկի տէր մարդ կաշխատի։

Տեսնե՛մ, վերցուր լայն տըրեխ,
Թափով յառաջ ել, ընթա.
Փողոցներու, տիղմ ու ցեխ,
Մայթն ալ հեշտիւ թող թնդայ։

Զի քրտամբ բարիք տեղան,
Ոսկին լընու սին քըսա՛կ.
Կը բոլորեն քո սեղան
Զաւակներդ գեղահասակ։



## ՊԱՐՏԻԶԱԿՑԻ ՍՏՆՏՈՒՆ

—

Գորովալիր, անոյշ տիկնայք փարելի,
Կա՞յ մի նըման որդեկորոյս մօր վշտին.
Մի՛ սփոփէք զիս, չիք սրտիս դիւր կարելի,
Բեկեալ սրտիս չիք սփոփանք, չիք հեշտին։

Ահա ձմեռ ճերմակ պատանք մ՚է թողեր,
Լեռն ու հովիտ հարթ հաւասար կը դուրէ.
Ձիւնն ըզգեցոյց չոր ծառերու մերկ ճիւղեր,
Քամին սարսէ սառոյցն ու կոխ կըտուրէ։

Եւ ո՛վ գիտէ, անդին կարօտ դարունի,
Ի՛նչ դողերով կը սարսայ հէգ որդիս.
Քանի խորհիմ սրտիկս է խոց կարունի,
Ո՛վ Պոլսեցիք, դուք չէք գիտեր ցաւ սրտիս։

Դուք չէք գիտեր ի՛նչ քաշեր եմ վշտաբեր,
Ողբոցն ի լուր մի մայր կրնա՞ք անարգել.
Քանի՛, քանի՛ ալի արցունք եմ թափեր,
Ո՛հ, թողէք զիս, թողէք խօսիմ անարգել։

Այո՛, պատեն խուցն իմ Պարսից թաւ գորգեր,
Եւ ի ցրտոյն պահպանեն փեղկք ձիւնահար.
Այլ կ՚ընտրէի ցախէ մի տուն, հին խորգեր,
Քան թէ կրել գիրկս ի նիրհ խարթն այս նիհար։

Ո՜վ պարտիզակ, ո՞ւր ես սիրոյս հեշտ օրրան,
Բունիկս ո՞ւր է մերձ առ սարօք մի բըլեր.
Ո՜վ յիշատակ քաղցր օրերու որք կորան,
Դար ու մար հիւղս հիմն ի յարեւ է փըլեր։

Հազիւ նոր հարս, սուգն օրս դարձոյց գիշեր մութ,
Դունէ ի դուռ իբր ստնտու այցելու՝
Զիս 'ի Պոլիս տարագրեցին յոյսեր սուտ
Կաթիս փոխան մանկանս ապրուստ ճարելու։

Բայց թէ նօթի փողոցն ինկեր թափառիմ,
Ինձ չիք հնար մոռնալ պաշտօնն իմ կաթի.
Անմարելի կրակն ինկեր կը վառիմ
Ես չեմ մատներ ճագուկս ի գին արծաթի։

Ո՜հ, աշխարհ մը, լուսինն, աստղերն ու արեւ
Թող շողշողեն լուսաճաճանչ քար թագիս,
Եւ ես դշխոյ բազմիմ գահի մ'ի վերեւ.
Ո՜հ, այս ամէնն ես չեմ փոխեր որդեկիս։

Այլ քեզ ծընող կինն այն անսիրտ մա՞յր է մի.
Որդւոյն կարեաց խանդաղատել չը գիտեր.
Ո՜վ դիեցիկ, սիրտն է փոխեր ժայռ վէմի
Եւ յղփանայ փառաց, փարար ինչքի տէր։

Քեզ չեմ կարող չատել ստեանցս երբ փարիս,
Զի կը ծըծես կեանքն որդեկիս. ծընո՛ւնդ չար.
Ծընունդ իժից որք յօրանան ի բարիս
Եւ բընութեան պարտքը թողուն անվըճար։



Ես քո վըտիտ անոյժ մարմնոյդ կեանք տուի,
Իսկ դուն որդւոյս կենաց փոխան կուտաս մահ.
Ինչպէ՞ս սիրեմ, ինչպէ՞ս սիրտս հետդ հաշտուի,
Թող տուր ծիծըս որ հառաչեմ կուշտ մը. ա՜հ...

Ա՜հ, թո՛ղ ծիծըս, թո՛ղ, չե՛ս խայթին արգանդիս,
Զը գօրավիր ազիքս ի տես դիմացդ հէգ.
Ձեր հացն՝ ինձ թոյն, ձեր վարձ կապանք են բանդիս
Ձեր պարգեւներ վըզիս շղթայ են մէյմէկ։

Ո՜վ կարգելու, ո՜հ ո՞ր օրէնք, ո՞ր երկրի
Շնչել զայրոյթ կնոջ մը չիք թեւ թիկունք.
Օտար տան մէջ ինչպէս պանդուխտ կին բերկրի
Երբ զինք պատեն մօր կաթէ զուրկ որդեկունք։

Կը խելառիմ, Աստուած, չիտեմ ի՜նչ կըսեմ,
Կրնա՞մ թողուլ զայս սովեալ խորթն որ մեռնի.
Կրնա՞մ յանկարծ մոռնալ պարտուցս՝ այս վըսեմ,
Վերջ տալ կենաց և յոյսերուն ապառնի։

Զէ՛, մի՛ լար մի՛.. դուն ալ իմն ես հէգ որդեակ
Ի՜նչ փոյթ թէ քեզ մարմին տուաւ մի խեռ կին.
Այն մօր սիրածն է գիտեմ ցուրտ մի դիակ,
Ում Աստուած տայ կենարար շունչն ու հոգին։

Աստուած ահեղ, հայր զըկելոց, վրիժառու
Որ վարձատրես ստնտուներ սիրտը բուխ.
Զիղջն աչերէս յորդահեղհեղ իբր առու.
Կիջեցընէ դառն արտասուաց կրկին ուղխ։

Ա՛ռ դիեցիկ, դադրէ լալէ, կշտացիր,
Վարդ շրթներուդ ծիծէս կաթի մարգարիտ․
Զաւկէս ետքը դու նոր երկինք մ'ինծ բացիր
Եւ յայտնեցայ ես իմ մայրդ ճշմարիտ։

Թէ այր թէ կին ճակատագիրն է դառնիլ,
Այրն իւր քրտամբ, կինն ալ նոյն իսկ իւր կաթով․
Ո՛հ ամօթ է աշխատելէ գանգատիլ,
Պէտք է մղել կենացն այս մարտ մեծ փութով։



# ՀՈՎԻՒՆ ՈՒ ՊՈՒԷՏՆ

Ինչո՞ւ իմ հէգ գառներ,
Ինչո՞ւ ինձ չէք անսար․
Լալով ի խնդիր ձեր
Կերթամ սարէ ի սար։

Իմ սեւ աչուի գառնուկ
Անգութ գայլեր կերան,
Իմ ամլիկներ մանուկ
Ընդ մացառուտս կորան։

Այսպէս սգամ մինուկ,
Գամբռն իմ խորդայ քնհատ
Բընաւ ալ չիք շըշուկ,
Լեռ ձոր լուռ են վըհատ։

Ի՛նչ դառն է հովուին կեանք
Լեռան մը ծայր հգնել,
Հսկել ըզխաշինս ջանգ,
Գիշերն 'ի բուն աքնել։

Ցերեկն արեւակէզ,
Գիշերն ալ ցրտահար,
Մահիճս է յարդի դէզ
Ամպն՝ ինձ յարկ հովանավար։

## ՅՈՐԴՈՐ

—

Ազատ իբր լերանց հովմ
Արգելք չունիս բընաւ ·
Կուղղես հոտդ ամեն կողմ,
Քոյդ են մարգերն անբաւ ։

Գարւոյ շօթն 'ի մախաղ,
Ի ծարաւելդ ալ կաթ զով ·
Գտնես հաց ու խաղաղ,
Չիտես ի՛նչ է դառն սով ։

Մինչ ի քաղաքս մարդիկ
Ո՞վ գիտէ, ունին տուն.
Պահնորդք կըսեն զարթիք,
Փողոցն մ'ըլլաք 'ի քուն ։

Մինչ ի քաղաքս մուրան
Նոյն իսկ չունին չոր հաց,
Քանի՜ քանի՛ք կուլան
Անձկոտ սիրտ աչուին թաց ։

Մ'ըլլար դուն պարապորդ
Ձեռքդ գործել վարժին,
Հովիւ, մըշակ, այգորդ,
Այս է կենաց բաժին ։



## ՆԷՅՋԱՆ ՋԷՆՆՈՐ

—

Ըսէ՛ք, ռամիկն ե՞րբ մուրաց
Ծեր և կարօտ մէկ մը կայ ։
Գործողքն ունին աւուր հաց
Նէյջան Ջէննոր ձեզ վըկայ ։

Ինձ կը բացուին ամէն դուռ
Ամեն սիրտ ինձ կը գերեմ
Եւ այն սրտերն անձնատուր
Մերթ կը զովեմ, մերթ կերեմ ։

Կերգեմ — կուլան, կը խնդան
Պաշտիմ վեհէն, կոպիտէն
Ես եմ հրճուանք մէն մի տան
Զիս խրարմէ կողոպտեն ։

Այլ թէ հարուստն, սաստիր
Ճոխանայ · սիրտն իմ կիզի ։
— Ո՛վ ճոխ, հանճարն չը ծախուիր
Դուն ալ, ստակդ ալ քեզի ։

Նեցուկս է սոսկ մի եղէգ
Այլ ես կարօտ չեմ մէկուն
Օ՛ն, ռամիկներ, քաջ եղէք
Գործել արթուն և 'ի քուն ։

Ի քո՞ւն— նուագ կերգեմ .
Կեցցէ Զէնոնըն ու հանճար
Արթո՞ւն — ճոխին կը նազեմ
Զի չեմ պապուկ ես անճար ։

Ես չեմ բնաւ այր նուաստ
Ի՞նչ փոյթ . աղքատ թէ հարուստ
Կապրիմ անկախ , աննըպաստ
Պէտք չեն թիկունք յարտաքուստ ։

Եւ չեմ բընաւ հէգ մըջնիկ
Ես ունի՛մ թեւ թըռնելու
Լինիմ արծուի թէ թռչնիկ
Ինձ պէտք չէ ճիւղ թառելու ։



## ՄԱՐԴԱՍՊԱՆՆ Ի ԲԱՆԴԻ

Անէ՛ծք , անէ՛ծք . երկինք , երկիր թող թնդան
Սխա՞լ կարծի , ո՞ւր է ոսոխս ոխերիմ
Ոստիկաններ զիս մի մըխէք ՚ի զընդան
Ազատ թողէք ապա թէ ոչ կը խեռիմ ։

Ո՛հ բանդապան , չըթաս հէրիք պըրկեցիր ,
Ցած ; դուն ո՞վ ես , է՞ր զիս սաստես իբըր տէր
Ես կարիճ եմ , պապանձէ , դուն լուռ կեցիր
Սիրտս խոց է արեանըս հայց մի փրթեր ։

Այլ ո՞ւր ես ոյժ , ո՞ւր ես գացեր թեւերէս ,
Ես որ երբեմն կոտրէի անուր , գել
Տե՛ս , սա շան քով զիս թողուցիր սեւերես
Որ զիս հեգնել կը յանդգնի անարգել ։

Ցայս ցուրտ բանդին չըտարտուալ կըա՞յ մի
Զիս կիսամերկ գըրբեր են ՚ի խշտեակ
Եւ անվանդակ պատուհանէս բուռն քամի
Քանի խուժէ , դառնամ անշունչ ցուրտ դիակ ։

Ո՛հ , կաղաչեմ , ինչ ալ ըլլամ մարդ եմ դեռ
Կուզեմ արեւ , տեսնել՝ կապոյտն ալ երկնի
Չորս պատի մէջ ուր գալարին սոսկ վառեր
Զիս մի թողուք սողալ նման զեռունի ։

Խաւարն առաւ աչերս , ո՛հ մութ է գիշեր
Ցից ձողերէն կը թափանցէ լուսնոյն լոյս
Թափուր բանդիս գայ շառագնէ մութ խորշեր
Պէտք է ցնորիմ և դառանցեմ մինչ ի լոյս ։

Ո՛հ, ի՛նչ հաճոյք է տակն առնուլ թշնամին,
Ծունգը կուրծքին՝ թիկունքն անզօր տալ հողոյն
Զայն փողոտել, մինչդեռ ուժերն իւր քամին
Եւ վեր թուել ձեռներն արեամբ ողողուն։

Վրէ՛ժ, վրէ՛ժ...այս են մարդոյն արժանիք
Թող դատաւորք լսեն յապուշ թող կրթին
Ինչո՞ւ չունիմ ես գայլերու սուր ժանիք
Որ ոսոխս կրծեմ ողջ ողջ ջիղ սրտին։

Ահա ինքն է սպանողիս ահատու...
Մի խեղաւեր, ե՛ւ կորիճ, չէ՛ մղձաւանջ
Մըխէ ցըրուն լայն դանակը մահատու
Թող թաւալի արիւնթաթաւ անճանանչ։

Այլ վա՜յ ինձ ո՛հ էր սոսկ աչաց երեւոյթ
Մի թոյլ ստուեր որ կը ցնդի, կուտայ խոյս
Եւ ի մըթան ճըխան ճիւաղք տան դըրոյթ
Զիս պաշարեն, ալ յոյս չըկայ եղկելւոյս։

Ա՛հ, միթէ վա՞գր, միթէ վայրի գազա՞ն եմ
Ի դառնադըլի մըռնչելու մատնուած
Պատիժս առի թէ մարդասպան վըզան եմ
Հերի՛ք կատղիմ զիս, սատկեցուր ո՛վ Աստուած։

Վեր վերցուցի վըզիս շղթայն ամբակուռ
Զայն թօթուեցի, զարկի անխախտ ձողերուն
Չը խորտակիր, աւա՛ղ բաղդիս, լացի լուռ
Կծկըտեցայ երեսըս բանդիս հողերուն։



Զա՛րկ, մարդասպան, զա՛րկ կաղատիս պատերէն,
Ինչո՞ւ ծըփաս ընդ մէջ ահ ու սարսափի ·
Զարկ գըլուխդ թող ջախջախի պատերէն,
Քանկէդ ուղեղդ արիւնթաթաւ թափթըփի։

* * *

—Զմրան գիշերն յանկարծ մթնեց ամպին տակ,
Ե՛տ, ե՛տ քաշեց լուսին զիւր շող գըլացաւ·
Ծածկուած էր չէկ ճապաղեօք լայն յատակ,
Սեւ հողն արիւնն կուշտ մը խըմեց յագեցաւ։

Կորիճն ինկեր ըզգայազիրկ կը ռըքար,
Վըրան խըսիր ծածկեց աժգոյն բանտապան ·
Զայն 'ի գըլխէն իջոյց անփոյթ, սիրտը քար·
Մարդասպանին չիք արտասուող, չիք տապան։

Երկիրն օրէնք ունի ուսի՛ր ո՛վ կորիճ,
Հոս շուտ չարին իւր կուտան անսաստ տըգեղին,
Կը ջախջախեն քինոտու օձն ու կորիճ
Մարդասպանին՝ չըջի հատակն ի գետին։

Ո՛վ կորիճներ, մի՛ վստահիք ձեր ուժին,
Զնդանն անխուլ պարապ տեղը չէ եղեր·
Վրէ՞ժ կուզէք — բանդն վրիժուցն է բաժին,
Վաղ, անդադան հոն կը քուէք ձեր եղեան։

Ո՛հ ձեռնամած կը պաղատիմ քեզ Աստուած,
Ի գաւիհն ապրող դատապարտապորտ, դատալիք՝
Ուսո՛ ռամիկն ապրիլ հըլու օրինաց,
Եւ ոչ մի Հայ չըլլայ կրից խաղալիք։

## ՊԱՊՈՒԿՆ ՊՈԼՍՈՅ

—

Էր ժամանակ որ եւ ես
Կը տեսնէի ձեզի պէս,
Այլ հատու լոյս արեւէս.
Ձա՛ւկըները՛ս։

Եւ ո՛հ, աւուրն անշէջ լոյս
Գիշե՛ր դարձաւ եղկելւոյս,
Գիշեր՝ ուր չիք արշալոյս
Ձա՛ւկըները՛ս։

Եւ մութն անդուլ, ոտքիս տակ,
Կընդլայնէ վիհ մ'անյատակ
Ո ր կը գլորիմ նահատակ.
Ձա՛ւկըները՛ս։

Եւ յանձանօթն, 'ի սարսափ
Մըխիմ աչիւ առ խարխափ
Ցուպն 'ի ձեռին, սրտախափ.
Ձա՛ւկըներ՛ըս։

Երկու աչից անկար եմ,
Եկեր դռներն ինկեր եմ,
Կարօտ անօք տըկար եմ.
Ձա՛ւկըները՛ս։



Ատենով սիրածներուդ,
Անուշիկ մեռելըներուդ,
Հոգւոյն 'ի սէր ցուցէք գութ.
Ձա՛ւկըները՛ս։

Կիրամուտք իրիկուն է,
Ի թաղիս ո՞վ հոգ կընէ
Թէ պապուկն էր նկուն է.
Ձա՛ւկըները՛ս։

Պապո՞ւկ, ա՜խ, ի՛նչ դառն անուն.
Մուրալ պէտք է, օրն ի բուն
Ձեռք կարկառել ամենուն.
Ձա՛ւկըները՛ս։

Քանի՛ դռներ բաղխեցի,
Քանի՛, քանի՛ չախս, խեցի
Ընկալայ փոխան հացի.
Ձա՛ւկըները՛ս։

Հերի՛ք, հերի՛ք թուք ու մուր.
Սրտիկս հատաւ տրտում ո՞ւր,
Դեռ ո՞ւր դիմեմ հէգս 'ի զուր.
Ձա՛ւկըները՛ս։

Տուէ՛ք, անկար պապուկն է,
Տուէ՛ք, օրս այս իր օրն է.
Տուէ՛ք, տուէք որ օրհնէ,
Ձա՛ւկըները՛ս։

Չի թէ չը տաք ի՞նչ կընեմ,
Ուսկի՞ց որդւոյս հաց գընեմ,
Ա՜խ, պէտք է լամ, սուգ ընեմ.
Զա՛ւկըները՛ս։

Նայեցէ՛ք, ողորմեցէք,
Ձեր քիչէն առատացէք,
Ինձ օգնել արտօրացէք.
Զա՛ւկըները՛ս։

Ձեռքէ, ոտքէ ինկալ կայ,
Կարի՞ճ — խըփել զաչս ի մահ,
Ծե՞ր — կարօտիլ կրել ա՜հ.
Զա՛ւկըները՛ս։

Այլ չը կրէք կսկիծ, միշտ,
Եւ ճոխանայ ձեզ բաղդ ուիշդ,
Շէն ու պայծառ մնաք միշտ.
Զա՛ւակնե՛րս։

Ցաւ չը կրէք սրտակէզ,
Տեսանելի և անտես,
Աստուած չարէն փրկէ ձեզ.
Զա՛ւկըները՛ս։



## ԴԱՐԲԻՆՔ ՍԱՄԱԹԻՈՅ

—

— Թող, կռթընիմ մօտ դըրան
Վարպետ տապիմ ծարաւի,
Պողպատեայ ծանր այս կռան
Խորտակէ թեւս յիրաւի։

— Կռուէ ըզգործիս երկաթի,
Մըշա՛կ, ե՛ւ, մի՛ վըհատիր.
Ճակտէդ քրտինք թող կաթի,
Ապա կռուանդ այդ փար դիր։

— Հընոցն այս վառ կայրէ զիս,
Կուրցան աչերս ալ ծուխէ.
Ցօճապարոյր բոց ալիս
Տապն իս պատեր կը ծախէ։

— Սամաթիացի քաջալանջ,
Փըքոցն անվախ պինդ քաշէ.
Լեր յաղթ դարբին մ'աննահանջ
Գործե՞լ — վառեր սալ մաշէ։

— Հին փըքոցն այս լայնափոր
Խոնջեալ խորդայ ու գոչէ,
Առ զով ջրոյն գէթ սափոր
Թացիր չըթերդ ու հանգչէ։

—Արի՛, համբակ, օ՛ն, յառաջ,
Կիզող տապէն թէ ծարուի
Վարձք կը գտնէ զաւակ քաջ
Գիշեր գգուանք մօր պտուղի:

—Լաւ միտքդ առ, ո՛վ դարբին
Ժողովրդեան զաւակն ես,
Անագորոյն դէմ բաղդին
Ես ոյժ գըտայ կռուելէս:

Մանկան տրտունջ դադրեցաւ
Որոտացին կըռան սայլ,
Ծուխ ու բոցի փոխուեցաւ
Մութ դարբնոցին սեւ մըռայլ:

Եւ ընդ երեկս երբոր հաց,
Տարաւ մօրկանն անսուաղ·
Մըրոտ թեւօք աչուին թաց,
Գրկեց պառուիկն այն նուաղ:

Եւ հէգ կին այն հեկեկար,
—Առիւծ դարբին, կորիւն իմ,
Զիս մի թողուր ապիկար
Զի թէ թողուս կը մեռնիմ:

Երդուաւ որդին երդում մեծ,
Հիւղն ի հիմանց սարսեցուց
Մայրն իւր կուրծքին վրայ սեղմեց
Ցնծմամբ լըցաւ տխուր խուց:



—Ժիր բազկացն իմ վստահէ
Ես չեմ ձայնիդ ըլլար խուլ,
Մա՛յր, քեզ չիք վախ դառն մահէ
Կեցցէ դարբնոց մեր խարխուլ:

Լուր ինձ ողջոյն Սամաթիա,
Թէ լըքանել ժըպրհիմ
Մայրս՝ որ փարխւքն արծաթեայ
Սուգով իջնէ ի շիրիմ,

Թող դարբնոցին մուրճ, կըռան
Զիմ խեռ գըլուխ ջախջախեն,
Զիս թող այրեն 'ի փըռան,
Զիս չար ծառէ թող կախեն:

## ՔԱՋԱԶ ԱՐԹԻՆ

—

Դո՛ւ, զոր հուշակեմ, վառէ սիրտս 'ի բոց՝
Ածել անվեհեր քնարիս կնդընդոց,
Միթէ չե՞ս կամիր 'ի հանճար կրթել
Ձայն որ քեզ ձօնէ նորավարժ զայս թել,
Ինձ տուր բաւան եռանդ, աւիւն ներշնչէ,
Խանդալից տաղեր ոգւոյս մրմնջէ։

Թէ նոր Քաղաքներ, փառաց 'ի զենիթ
Կանգնին պերճափայլ կրել վեհ դափնիդ,
Այլ հէգ պուէտիս բաժինն է կրկին
Միայն գեղգեղել սփոփանս ռամկին.
Զի ռամկին անկ է ըղձամիկս ոգել
Մինչ մուսայք ժըտին վեհագունս երգել։

* * *

Ո՛վ պուէտ ռամիկ, որ Թախանձանաց
Զիջանիմ, յառնեմ ցուրտ մահարձանաց,
Զարկ ուրախ երգեր, ցնծա՛ սիրտ ի խինդ,
Գոռացնեն զայերս և երգերդ 'ի թինդ.
Վեր վերցուր քընարդ, անվեհեր կանգնէ,
Քեզ զոր ինչ տուն տամ, իմ ազգիս կրկնէ։

Օր մը կը յիշեմ, էր երկուշաբթի,
Օ՛ր՝ ուր անխըտիր մարդ գործել պարտի.
Իջայ Գումգաբու, ո՛հ գլխ ծովուն բաց
Ջաքըր բէյիս տար, ըսի աչուիս թաց.
Տրտմած է այս օր հէգ մանչուկդ Արթին
Այս օր շուկայն գործ, ո՛հ լըւել պարտին։



Բայց Ջաքըր ցասմամբ նաւն առաջ մըղեց,
Ցատկեց դուրս հուժկու ձեռներն յիս մըխեց
Եւ ինչպէս ձմրան ծառոց մերկ վարսէն
Արմատէն 'ի բուն հողմք կաղնիս տարսեն,
Օձիքէս բռնած այնպէս զիս տարսեց
Ցեռոյ զիս անշարժ 'ի գետին վարսեց։

—Այդ ի՞նչ է, ծօ շո՛ւն, հոս ի՞նչ բան ունիս
Առ քեզ ապտակ մը, կից մ'ալ կը հանի՞ս.
Շաբթուն բուր օրը, տօն օ՞ր կարծեցիր,
Կորսուէ սըկէց շուտ խանութ դարձիր.
Ոտքդ կը կտրեմ գործի որ մի դար,
Ետքը գլուխդ կուդայ քարէ 'ի քար։

—Ո՛հ, զարկ գոչեցի, Ջաքըր բէյիս զարկ,
Այսու կերտեցիր ապագայ զիմ փառք.
Զի մեզ սիրողին պէտք է համբերել,
Պէտք է հարուածող ձեռքն իր համբուրել.
Կերած ապտակս, Ջաքըր, չեմ մոռցեր.
Փառացս 'ի կատար կօրհնեմ քեզ խեղճ ծեր։

Դարձայ մութ շուկայն տրտում ու տխուր
—Ո՞ւր եմ, կըսէի, ո՞ւր փախիմ, ա՛խ, ո՞ւր.
Պարապ տոպրակը բեռնայի լըւին,
Խրճիթ դառնայի ոգիս 'ի բըւին,
Ձիս դրեր էին յանչուք մի կրպակ
Անօթի, ծարաւ լինել բերեզակ։

Հոն քիչ օրուան մէջ շատ վիշտ կրեցի,
Դեռ առոյգ 'ի տիս սիրտս ծերացաւ,
Այլ ես առ ոչինչ զայն վիշտ գըրեցի
Կամքս էր անյողդողդ. մինչ յոյս վերացաւ.
Եւ խոնարհ շուկայն, կենացս ուղղեցոյց,
Գահոյից առ ոտս շուտ զիս բարձրացոյց։

Երբ շնչէ մեղմ սիւգ ցրուին մութ ամպեր,
Վարդերու ծոցէն կը կաթկըթի ցօղ
Զերթ նոր բուրաստան անապատն անբեր
Կառնու նոր կենցաղ և ամուլ սեւ հող.
Բոյր 'ի բոյր ծաղկունք շարժին տարուբեր
Ոսկենշոյլ արփին ճաճանչէ զիւր շող։

Այնպէս և Աստիլ 'ի շնչել զիւր շունչ
Ճակտէս հոգ, թախիծ ցրուեց զերթ մեղմ հողմ.
Յանժամ կարկեցան անզօր, անմռունչ
Ամուլ սրտերու նախանձն իմ չորս կողմ.
Մինթէ կա՞յ մի մարդ երջանիկ քան զիս,
Ես կեանքս ուխտեցի իմ Վեհ Սուլթանիս։

Իւր երկրին ըլլալ օգտակար մի անձ,
Յարաժամ հըլու զօրինօքն անանց.
Աշխատանք, քրտունք և վաստակ կուտան,
Գիտցիր խնկապէս մեծութիւն մի տան։
Սարրաֆին տըղան կլյնայ կը մուրայ,
Պէզազին տըղան կանգնի ամիրայ։



Ինչու դանդաղիս թէ արդ այլ է դար,
Եւ քեզ պահուած են վայելք անվըրժար.
Նորանոր հընարք ելեկտոն շոգի
Մինթէ թոյլ չե՞ն տար քեզ առնուլ ոգի.
Դար քո ընծայէ վայելից մըթեր
Զորս անգիտես դու, ոյց չես լինիր տէր։

Ի՞նչ են շոգեկառք, ի՞նչ է հեռագիր,
Ներկայ դարուս փառք նշանն համակիր,
Դիտէ շաւիղդ այդ, զաչս ուղղէ 'ի վեր
Երկաթեայ թիկունք՝ երկաթեայ թեւեր.
Յորդոր են, ռամիկ, դոքա հոգեշէն
Աշխատանք, վաստակ վառերն կը մաշեն։

Թէ պրկին այդ թեւք, կապին, կաշկանդին
Յադուրդ տան յաւէտ գործոյ եռանդին.
Թէ կըքին թիկունք ծանըր բեռան տակ,
Այլ կեցցե՛ն յաւէտ գործոյ նահատակք
Որ երկրէ երկիր, քաղաքէ քաղաք
Մարդկութիւնն համայն կը զօդեն անքակ։

Ունեցիր, ռամիկ, կամք մը երկաթէ
Երկաթէ թիկունք, երկաթէ թեւեր,
Թող կըքած ճա՛կտէդ յորդ քրտինք կաթէ
Ա[illegible] ճակտիդ քրտամբ կեր.
Զայս ձեզ կըտակէ ռամկաց հայր Քազազ
Քրտամբ կը շահուի վայելք աննուազ։

## ՄԱՀԱՄԵՐՁ ԱՂՋԻԿԱՆ ՅԱՅՏԱԶՄԱ ՍՕԳԱԳ

—

Խուլ մահն անուշ բերնել
Հնար չըկա՞յ, չըլլա՞ր։
Ես չեմ ուզեր մեռնել,
Անուշ մարիկ,
Ինտո՞ր կըսես, մի՛ լար։

Լացէ՛ք և դուք կոյսեր
Կենացս այս սուղ գարուն։
Ինծի աշխարհ լոյս էր,
Մթնեց աչուիս,
Սրտէս գընաց արուն։

Երկինք կապոյտ չունի,
Խաւարն աչերս առաւ։
Վա՜յ ինձ, հառաչ ունի,
Զուզեր մեռնել
Նոյն իսկ խուռուած պառաւ։

Իսկ ես ինտո՞ր չիրմին,
Դեռ կոյս իջնեմ 'ի ծոց.
Վարդեր բացուին, թոռմին,
Ապա թափեն
Թերթերն ուժգին հողմոց։



Ձեղայ օր մը գունէ
Նոր հարս նըման ծաղկի։
Աս ի՛նչ դըժար բան է,
Ես չեմ ուզեր,
Պատանք փոխան քօղքի։

Ծըտիս կորանք է այս
Աչքս էտիս մընաց։
Ինտո՞ր չըտամ իմ վայս,
Ա՜խ, ճար չըկայ,
Իցիւ չէի ծընած։

Տէրտէրն ո՞րու ճակտին
Հիւսէ պիտի նարօտ։
Մարիկ, ոսկերքս քակտին,
Ա՜խ, չուտ գոցէ
Աչերս, հողու կարօտ։

Արունս մոնողն ո՞ւր է,
Ի՞նչ չուտ մօքէն էլայ։
Անուշ մարիկ ներէ,
Քովըս թող գայ,
Ճակտիս վըրայ թող լայ,

Ցուրտ հովն ահա չնչէ,
Կըքիմ անզօր չուշան։
Մահուանս աղօթք մինչէ,
Խաչս եւ տար,
Սիրոյս յետին նըշան։

Եւ ձայնս ահա նուաղ
Մահուան 'ի շունչ դադրի ։
Թէ զոք սիրէք աւա՛ղ,
Վըրաս լալու,
Եկէք տարուէ տարի ։



## ՍՐՃԱՐԱՆ Ի ՔԵԱՂՏԽԱՆԷ

—

Ո՛վ իմ անուշ Քեաղըտխանէ,
Է՞ր փրփըրաս կոհակներդ լուրջ.
Է՞ր սրտմըտիս, պատասխանէ,
Զաղըղանի մարմարին շուրջ ։

Սուզեն ահա ուռիք դալար,
Ջուրս 'ի ծոցիկդ հեզակարկաչ.
Մինչ դու գընաս դարիւ մոլար,
Մրմնչելով 'ի քաղցր աւաչ,

Եւ 'ի շամբուտս, խարձերու մէջ,
Ոլորտապտոյտ կը դալարիս.
Ուղխինաձէմ, փողփողենէջ,
Սողաս մեղմիւ 'ի դալարիս ։

Եւ մերթ սահիս սրտիս հանգոյն,
Քա՛նի անդորր ու խաղաղիկ.
Ուր որ քաղել գան գոյնըզգոյն,
Եզերքիդ մօտ վայրի ծաղիկ ։

Այսքան դար է, անխոնջ բըլուտ,
Կաւուտ ափանցդ այդ կարօտի.
Թրծէ զաղիւս թեւօք մըրուտ,
Եզերքներուդ մէջ Նարօտի ։

Ծուխ ու բոցի մէջ կորսուած ,
Հրատոջոր կեփի ագուռ ·
Եւ Ոսկեղջեր կաւն է կերտած ,
Պօլսոյ ամէն չէնքն ամրակուռ ։

Հոս լուր աւուրք են անապատ ,
Այլ և խուներն մերթ կարգ ըստ կարգ ·
Երբ տօն աւուրք են կամ ուրբաթ ,
Նժոյգ ձիեր փառաւոր կառք ։

Ի Գալատան ծախել կընտրեմ,
Մի գաւաթ սուրճ տաք փարա ·
Քրտանց փոխան վարձք կը խնդրեմ
Քան դատարկ կեանք և բիւր լիրա ։

Եւ արձարար յորդւոց որդի ,
Այո՛, կընտրեմ գործն ու ժիր կեանք ·
Կարօտ չունիմ ես նախարդի ,
Գըծել կենացս այս արշաւանք ։

Կենաց պայման , ձկնորս , դերձակ ,
Ինչ ալ լինի , Հայքս աշխատինք ·
Գործեմք , դատիմք , կըրից արձակ ,
Կամ յանձն առնումք դառն նախատինք ։



## ԴԻԱԹԱՂՆ Ի ՊԱԼԸԳԼԸ

Հարուստ , աղքատ , ծեր , պառաւ , կոյս , պատանին ,
Հոս կը թողուն փառք , անուն , ինչք , նենգն ու դաւ ·
Ցուրտ աշխարհէս ափ մը սեւ հող կը տանին
Ի Պալըգլը · շատ շատ կանգուն մը կըտաւ ։
Լացէ՛ք , լացէ՛ք · եթէ խոնաւ ծոց շիրմին
Դագաղն իջոյց սիրեցելոյն ցուրտ մարմին ·
Լացէ՛ք , լացէք , աւաղ յայն մութ 'ի խորշիս ։
Դիակն 'ի հող՝ լուծուին ոսկերքն 'ի բորբոս ,
Լացէք և դուք ականողիք իմ լացէք ·
Եթէ մեռնիմ որդւոց ճարակ լքուած էք ։
Այլ դիաթաղս անմխիթար ինչո՞ւ լամ,
Սրբել աչացս արտօսր ազի՝ է՞ր ծուլամ,
Թեւատարած հին բըռնինչեր կորովի
Հողմակոծեալ կանգնին՝ ուր մարդ խըռովի ,
Եւ զոստս 'ի վայր տատանելով յաւիտեան ,
Ձգնին `ի դուր ծածկել գաղտնիք յարութեան ։
Արեւն 'ի մար ամփոփէ շողն իւր յետին ,
Եւ ես խոնջեալ թողում բըրինչն ի գետին
Եւ ընդ երեկս յեցեալ ահիւ լայն 'ի բահ
Յափշտակեալ յանկուր անուրջս հոլաթեւ
Եւր գերանդին՝ տեսանեմ 'ի ձեռս զանգուած մահ ,
Խուլ աղերսից զաշխարհ հնձել թոյլ թեւթեւ ,
Այլ մահն 'ի դուր ըզմարդ կըրել դարանի ,
Ըզնորածին գիտէ մանկունս յորդանի ,
Կը շուարին անլոյս իւր փոս աչք նախանձ ,

կանճարակին իւր կըմախք ձեռք մարդախանձ ·
Ահա բացուի կնքեալ ցուրտ վէմ տապանին
Կը պարտի մահ, կընկճի · չարիք խափանին ։
Ո՞ւր է ուրեմն, ո՛վ մահ, խայթոցդ ո՞ւր մընաց,
Ո՛վ գերեզման այս ինչ առիթ զարմանաց ·
Պատանքն 'ի գլուխ յառնեն ննջողք կողկողի
Օ՛ն, մարդն ընդ վայր հոս սիրտն 'ի սուգ կողկողի ։
Աչք իմ ուրախ ալ դիտեցէք անխըռով,
Այսուհետեւ տխուր չիրմին մութ խորեր,
Հոն ուր երբեմն տարապայման սարսուռով,
Արտասուալից աչք մը նայիլ չէր խորհեր ։
Ահա հոգիք թեւս զգենուն սիրարկուս,
Եւ վերճեմեն 'ի ձիւնաթոյր վերարկուս,
Եւ զուարթունք պսակ 'ի գլուխ ոսկեփայլ,
Սուտ աշխարհէս սլանան յերկինս յամպոց սայլ ։
Ե՛կ, ո՛վ ռամիկ, ե՛կ արձակենք լոյս ժպիտ,
Մեր հարց օրհնեալ չիրմէն ցրուին մըռայլ մութք,
Մինչ ինձ նըման մի դիաթաղ կոշտ կոպիտ
Դողդըղալով կիշխէ բանալ երկնից մուտք ։
Հարուստ, աղքատ մեծ ու պզտիկ հոս չըկան,
Վտառակաբեկ ռամիկներ հոս կը հանգչին ·
Եղբայրադաւ վատ հերձուածոց վերջ կուգան ·
Ցայսմ մասին մահն արդար է խըտիր չիք ։
Թէեւ 'ի վէմ քանդակեալ տառքն աստ ափսոս,
Զեղբարս յեղբարց 'ի գերեզմանս կը զատեն ·
Այլ երբ բացուի խորհրդաւոր չիրմին փոս ·
Զերծ 'ի կըրից զիրար սիրել ազատ են ։
Ես այսքան օր յորդւոց որդի դիաթաղ,
Իմ հարցս ոսկերս անթարթ աչօք դիտեցի,



յըղդուած և պլլասեռ 'ի մի թաղ
անդչել խաղաղ առանց կարծեաց խորոցի ·
Զի հէգ մարդոյն թէ սիրտն 'ի սէր կը վառի
Անշահ վարկմանց սադրանքն անշուշտ կը լռեն ·
Չիրմին խորը ․տառուած միայն բարշառի,
Խարող տառեր մարդիկ առ ի՞նչ կը զօրեն ։
Ո՛հ ամօթ է նոյն հօր որդւոց կեալ 'ի կռիւ,
Կագին 'ի դժոխս ջատուկք 'ի հեր օձախռիւ,
Եւ որք արեան կըրեն յերակս նոյն կաթիլ
Այլ թող դադրին յանուն Էլին պառակտիլ ։

## ՆԵՐԿԱՐԱՐՆ ՅԵՆԻ ՇԷՀԻՐ

—

Հերի՛ք մուծեալ ՚ի քակոր,
Մաքրեմ ամէն ժամանակ.
Կօշիկ, տըրեխ, գլխիկոր.
Կորէք, տուփ, ներկ, խոզանակ։

Հերի՛ք, թէ բաղդն ինձ եցոյց,
Թէ կարօտ եմ չոր հացի.
Երբ վիշտն արցունքս ցամքեցոյց,
Գէթ լալու տեղ խնդացի։

Մինչ յղփանայ ճոխն ՚ի փառս,
Նախանձիւք սիրտն իմ մաշի.
Ի տիղմ բազմիմ. նա՝ ՚ի կառս,
Փոթորկէ շուրջս հող փոշի։

Ո՛ր հեգնութեան հոգեքանդ,
Ո՛ր մ՚էր տրտում և տըխուր.
Ո՛րն որ բացաւ մօրս արգանդ,
Ո՛ր ծընընդեանս շանըխուր։

Տարա՛ւ, նո՛թի, մե՛րկ, բոկո՛տն,
Ըսին, ինչպէ՞ս չը վիժեց.
Նոր ծախքի դուռ զայս լակոտն,
Զոր վաստակողն իսկ մերժեց։



Ա՞յս են մաղթանք, շնորհաւոր,
Ա՞յս, մօր մ՚ուրախ աչքդ լոյս.
Վըճիռ տուին ահաւոր,
Կեանքն սպառել եղկելոյս։

Այլ ո՛հ յքեալն իմ մայրիկ,
Իւր հէգ որդին գիրկն առաւ.
Ինձ հաց ճարեց մի փայրիկ,
Զիս ապրեցոյց, ինք մեռաւ։

Ըսէք, կա՛յ մի յաղթանակ,
Քան զայս վըսեմ ու փայլուն.
Մայր մը կըլլայ նահատակ,
Եւ կեանք կուտայ իւր որդւոյն։

Ամառ աւուրն մեր կարիք,
Լընոյր սոխ, հաց ճըճեկեր.
Սիրտս ա՛խ կերի խեղճ մարիկ,
Ան ալ քիչի՛կ քիչի՛կ էր։

Այլ երբ եկան ձիւն ու բուք,
Ցուրտն առաւ քեզ դարձոյց սառ.
Քեզ հող դըրին չո՞ս պապուկ,
Հագիւ տէրտէր մ՚իսկ տեսար։

Հեշտ տափանաց ծոցն ի քուն,
Ո՞վ զիս երկնեց, իջոյց հոս.
Վայելք մի առն որ թաքուն,
Գըրեց զիս յայս խաւար փոս։

Թէ մօրս լջար ի մահիճ,
Իւր վարդ ծոցիկն ի փըթիթ ·
Ինձ հա՞յր եղար թէ դահիճ,
Ես լակո՞տ եմ, թէ որդիդ ։

Դատ ըրէ ինձ, ո՛վ Աստուած,
Քենէ 'ի զատ ո՞վ ունի '·
Զիս մի թողուր անարգուած,
Զի թէ թողուս կը մեռնիմ։

Ո՛չ հայր ունիմ և ո՛չ մայր,
Ո՛չ մերձաւոր ազգական ·
Աշխարհն ինձ մութ է յամայր,
Բաժինս է լալ, ողբ, կական ։

Վարա՛ր, դէմքդ ալ չը ժպտի,
Վախցիր բաղդէն կրէ ահ ·
Դուն ալ օր մը լաս պիտի,
Լալն է կարգաւ լեր վստահ ։

Եւ է՞ր ժպտիս այր աղէտ,
Կարծես ծընունդս աւեղծուած ·
Մարդ չէ որ ինձ հոգի ետ,
Իմ արարիչն է Աստուած ։

Եթէ նիրհեմ ես ցօղուն,
Նըման վայրի շուշանին ·
Այգուն հասակս է ճօղուն,
Մինչ ճոխք կըքին տաժանին ։



Կենաց պայման են քրտունք,
Զի՛ք լակոտ, չի՛ք հարազատ ·
Ի գին քրտանց, զուարթունք
Լինիմք հըլու, յար ազատ ։

Եկէք ուրեմն տուփ չքնաղ,
Խոզանակ ու ներկ փայլուն ·
Զի գործել միշտ անդանդաղ,
Ճակատագիրն է փայլուն ։

# ԱՌ Մ. ԹՕՋԼԵԱՆ

## ՄԱՀ ԹՌՉՆԵԿԻՆ

—

Երկինքն 'ի վեր կը նայէի,
Աշխարհն աչացս մութ կը թուէր.
Ալ իմ կեանքէս յոյս չունէի,
Սրտիկս էր խոց՝ յոյժ կարեվէր։

Հազիւ թեւերս հովուն տուի,
Անգութ որսորդ մը զիս տեսաւ.
Ունայն՝ անուժ թեւս շարժեցի,
Կուրծքէս կապարն 'ի մահ զարկաւ։

Երկինքն 'ի վեր կը նայէի,
Աշխարհն աչացս մութ կը թուէր.
Ալ իմ կեանքէս յոյս չունէի,
Սրտիկս էր խոց՝ յոյժ կարեվէր։

Շուտով ինկայ թուփի մը ծոց,
Փոքրիկ տղայ, ո՜հ զիս խղճայ.
Քու հէգ մայրիկդ չընէ՞ր ողբ, կոծ,
Երբ քու աչերդ ալ մըթննայ։

Երկինքն 'ի վեր կը նայէի,
Աշխարհն աչացս մութ կը թուէր.
Ալ իմ կեանքէս յոյս չունէի,
Սրտիկս էր խոց՝ յոյժ կարեվէր։



Փոքրիկ ձեռներդ զիս ճմլեցին,
Զիս մեռցուցիր անգութ տղայ.
Թող իմ հէգ մօրս այս գոյժ տանին,
Բունին եղերք թող թառի՝ լայ։

Արիւն թաթաւ թեւերս չորս դիս,
Ահա խըփեմ զաչուիս 'ի մահ.
Ագռաւներու որս եղաւ դիս.
Ես ո՞ւր էի, ո՞ւր եմ հիմայ։

Թռչնիկն այն ես եմ կարեվէր,
Սիրտս խոցեց սըլաք բաղդին.
Կտրտեցան յուսոյս թեւեր,
Ոսկերքս 'ի դող մահու խախտին։

Թռչնիկն այն ես եմ նետահար,
Եղայ տղու ձեռք խաղալիք.
Մայրիկ ողբայ զայս պատահար,
Զը խնդացած եղայ լալիք։

Եւ հէգ ռամիկ կը նայէի,
Մութ էր երկինք, աշխարհ մութ էր.
Ալ իմ կեանքէս յոյս չունէի,
Սրտիկս էր խոց՝ յոյժ կարեվէր։

## ՍԵԲԱՍՏԱՑԻ ԲԱՂՆԵՊԱՆՆ

—

Բաղնիքն առտուն մութ պատէր,
Գլգլար սակ մի պատրույգ·
Խարխափելով թաց պատեր,
Ներս մըտայ, ոտքս երանիկ զոյգ։

Մթնոլորտն է գոլորշի,
Քիրտն ու շոգի կը ծըծեմ.
Երկինքս գմբէթ բոլորշի,
Ոյց կամարին տակ հեծեմ։

Այս ի՛նչ վիճակ է նուաստ,
Պատիւն հոս ո՞ւր կը մնայ.
Դառն կատակ մ'է կեանքն անաստ,
Եւ 'ի դըժոխս վերջ գտնոյ։

Աչացս առջեւ ուրուանէջ,
Ծիւաղք ճըխան սողոսկին.
Ծըգնին ձըգել մին 'ի մէնջ,
Ի գեհեան մուտք դըժոխքին։

Այլ խնկեցի խեռ բերիք,
Զայնս սարսոյլ պակուցի.
Ցայգ խորդացին ալ հերիք,
Զիւրեանց պայրոյթ ցածուցի։



Քան զարփենւոյն ճառագայթ,
Ըզկիւս առեն, հալածին.
Կը գըլորին գայթ 'ի գայթ,
Խոյս կուտան դեւք ուրուածին։

Մըտիր, ո՛վ մանչ, մի՛ վախնար,
Բեր ինձ զենջակն ու աճառ·
Փոխել զարհեստ չէք հնար,
Սկըսինք մեր զեղխ վաճառ։

Լուա, լուա՛, անխըտիր,
Մեծ ու պզտիկ մարդ աղտոտ.
Լուա՛, ե՛լ մի՛ գանգատիր,
Այր բարի, վատն ու կաթոտ։

Ճակատագրիդ խիստ օրին,
Սեբաստացի ե՛լ, գործէ.
Արհեստներու ստորինն,
Ուր շղթայից կիրք զերծ է։

Միթէ յիմա՞ր եմ վըհատ,
Զիս ո՛վ բաղնեաց կը կապէ·
Ո՞վ կարգելու բռնադատ,
Խոյս տալ յայս խոր վիրապէ։

Ըլնեմ դուրս, ուր որ երկինք,
Անպարոյր կը ծաւալին.
Ուր ամպք սուրան զերթ բըքինք.
Կամ հոշմավար թաւալին։

*Ելնեմ դուրս, ուր որ Աստուած,*
*Մրցողին պըսակ մ'ունի.*
*Ուր անխըտիր ստեղծուած,*
*Ըստ ճըգանց վարձք կընդունի։*

*Թերեւս ըլլամ ցանկալի,*
*Ոչ բաղնեպան մը անարգ.*
*Ոստանիկ կամ աւելի,*
*Բազմիլ դահլիճս ու 'ի կառք։*

*Սերաստացի, ե՛ւ չարժէ,*
*Կոյր բաղդին դէմ խիզախել.*
*Շուտ համոզուէ թէ կարժէ,*
*Վատ արհեստն իւր մերթ փոխել։*



## ԿՕՇԿԱԿԱՐ ՌԱՏԻԿ

—

*Ճէփահիրճի վարպետ Ռատիկ,*
*Արհեստիս մէջ եմ մէկ հատիկ.*
*Անգամ մը գէթ,* զատկէ զատիկ,
*Կօշիկներս փորձել պարտիք։*

*Շինած կօշիկս ինչպէ՞ս մաշի,*
*Ինձ ի՞նչ է պէտք խօսք պատ 'ի պատ.*
*Կուտէ մուրճը փափուկ կաշի,*
*Կըլլայ տակուն որպէս պողպատ։*

*Մըտիկ մ'ընէք այլոց սադրանք,*
*Հանգիստ պարտիք տալ նախ անձին.*
*Այլոց կօշիկն է զուրդ պատրանք,*
*Վարպետք 'ի զուր գլխ Նախանձին։*

*Ձի գործել մոյկ, տըրեխ, մուճակ,*
*Կօշկակարիս է սոսկ պարծանք.*
*Սիրեմք Հայեր կենաց վիճակ,*
*Գործեմք անխոնջ 'ի մի պար, ցանդ։*

*Մըտիր ձեւի, կոկուէ կօշիկ,*
Ուզես չուզես կաղապարած է.
*Այսպէս և մարդ յուշիկ յուշիկ,*
*Կուսնի լինել զոր ինչ պարտ է։*

Կաշի, ներկ, մոմ, ասեղ, դերձան,
Մուրճ, կաղապար, մի սուր դանակ,
Փայտէ գամեր, հերիւն, աքցան,
Ծուլութեան դէմ տան յաղթանակ։

Ճէվահիրճի վարպետ Թաթիկ,
Արհեստիս մէջ եմ մէկ հատիկ.
Ալ մի յեղգայք, ժամ է, զարթիք,
Ո՛վ ռամիկներ, գործել պարտիք։

* * *

Ի՞նչ շահ ունիմ տալու ձըրի,
Կօշկակարիս շըռայլ գովեստ.
Սուտ գովեստը շուտ կը ցըրի,
Կըլլամ շաղփաղփ, ոչ այր մի վեստ։

Ճէվահիրճի վարպետ Թաթիկ,
Արհեստին մէջ է մէկ հատիկ.
Ո՛վ կօշկոճեալ, փափուկ տոտիկ,
Գացէք իրեն, մի՛ երկմըտիք։



## ՏՐՏՈՒՆՋ ՊՈՒԷՏԻՆ

—

Սիրտ չունիմ ես երգ երգելու,
Քանի նայիմ յանդութ երկիր.
Եղե՛րերգէ քընար հըլու,
Եղո՛ւկ եմ ես ցնծալ երկիր։

Ո՞ւր կը դիմէ հէգ մարդկութիւն,
Ո՞ւր խօլ ընթացքն իւր կանգ կառնէ.
Ինչո՞ւ լըռին է մեծ բնութիւն,
Ճակատագիրն այս ի՛նչ դառն է։

Ցոյն 'ի բողբոջ թէ զիւր կոկոն
Ծօճէ զինեւ տայ վայելք սուղ,
Այլ առ ուղեւան իւր վարդ մեկոն,
Պատիր ծաղիկ են անպըտուղ։

Աստ անդ յուսայ թէ հանգրուան,
Անձկօտ աչացս իմ պատահի.
Հոն կը խորհիմ յաջորդ օրուան,
Անտի և խոյս տամ առ ահի։

Միթէ բու չէ՞ր մեղուին խայթոց,
Քնքոյշ վարդին իւր սո՞ւր փուշեր.
Հակայ լերանց կրակն ու բոց,
Եւ լոյս աւուրն ամպոտ գիշեր։

Միթէ բաւ չէ՞ր գինւոյն իւր դիրտ,
Մեղուին լեղի, դառն է խորիսխ·
Չեմ դիմանար, տրտնջա՛ սիրտ,
Ծըփա՛ ոգւոյս նաւն անխարիսխ:

---

## ՅՈՐԴՈՐ

—

Ցածի՛ր, ցածի՛ր տրտնջող սիրտ,
Կեանքն խառն 'ի խինդ ցաւօք կազմի·
Պարտի քամել ըզգինւոյն դիրտ,
Որ 'ի խնջոյս սեղան բազմի:

Ցածի՛ր, ցածի՛ր եթէ սիրտ հէգ,
Տեղան թոնուտք ու գետք զեղուն·
Այլ այն ամբուռք, մըրըրիկ, մէգ,
Երաշտ երկիրն առնեն բեղուն:

Ցացի՛ր, ցածի՛ր թող սիրտ վարժի,
Թէ բորբոքի մերթ լեռ հրաբուղխ·
Եւ 'ի հիմանց երկիր շարժի,
Խոփն արօրէ լաւայից ուղխ:

Ի՛նչ փոյթ մեղուին իւր սուր խայթոց,
Թէ փոխան տայ մերթ քաղցր խորիսխ·
Եւ աշխարհս այս՝ ծով դառն ցաւոց,
Թէ զԱստուած տայ յուսոյ խարիսխ:



Ի՛նչ փոյթ վարդին իւր սուր փուշեր,
Թէ խնկէ զօդս 'ի բոյր անոյշ·
Այն սուր փուշերն ինձ մի յիշեր,
Այլ վայելէ ծաղիկն քնքոյշ:

Ի՛նչ փոյթ ընդ քեւ թէ ցցուի խաւթ,
Յորժամ չունես յայսմ աշխարհէ·
Նաւահանգիստն է անխախուտ,
Զերկինս ունողն է՛ր աշխարհէ:

---

## ՌԱՄԻԿ ՏԱՐՓԱԾՈՒՆ

—

Ես ո՛չ, ռամիկ եմ, իսկ դու՝ մի բամբիշ,
Հազիւ քեզ դիտել կ'իշխեմ դողունի ·
Մինչդեռ ճոխ մարդիկ, յակճխաս ակնապիշ,
Շրջեն քո վերայ հայեացք լրբենի :

Գիտե՞ս, մինչդեռ դու նազիս խաղալիկ,
Գիտե՞ս, ի՛նչ տագնապ կըրեմ դժոխըմբեր ·
Տե՛ս, ո՞յք քեզ ձօնեն սէր 'ի բիւր ծաղիկ,
Տե՛ս, ի՛նչ մարդիկներ քո շուրջդ ես խըմբեր :

Բայց ի՛նչ, գէթ ես խրոխտ կըտրիճ եմ ահա,
Դեռ նոր պեխերըս ըսկսեր են գալ ·
Սիրտըս կը տրոփէ, արիւնս կը փրփրայ,
Քո կեղծ խնկարկուք, կրնա՞ն ինձ վէգ գալ :

Զըլլայ որ օր մը երբոր գայ ձըմեռ,
Երբ ցուրտ հովերէն ծաղկունք տառապին ·
Կըքես վարդ գըլխիկդ քո ցօղունիդ բեռ,
Թերթերդ թօթափես, ցրուես տարափին :

Զըլլա՜յ՝ թօթափին, զուլամբդ փարելի,
Մետաքս ու ոս'կի այդ դեղձան մազերդ ·
Աննեցուկ լքուելդ ըլլայ կարելի,
Ռամիկն ալ գոչէ, յիշելով նազերդ :



« Ցայր այտերդ ո՞ւր են, շըսե՞ս, ի՛նչ եղան,
Խե՛նդ աղջիկ, խելքովդ զիս անարգեցիր ·
Տե՛ս, մենուկ ծունգերդ ի՛նչպէս կը դողան · · ·
Ա՛լ ուզածիդ չափ գընա՛ խըռուացիր :

« Խըռուացիր պառա՛ւ, ալ ո՞վ կը նայի,
Մարած աչքերուդ, յօնքերուդ ցանցառ ·
Զո՞վ մոգէ պիտի խըռպոտ ձայնդ ձայլ,
Զո՞վ դիւթեն պիտի այտերըդ ցան ցառ : »

Բայց այժմ այնքան գիրդ և ես այնքան հեշտ,
Որ գեղոյդ համայն աշխարհ կը զմայլի ·
Ինչպէ՞ս քո սիրոյդ առնում հրաժեշտ ·
Ինչպէ՞ս չ'ամփոփի ու սիրտս չ'այլայլի :

Ա՜հ կայրի սրտիկս, սիրովդ կը տաղի :
Սիրոյ հըրեշտակ, միթէ դու մէկէն,
Ջատուկ մը դարձար, անհաշտ կատաղի ·
Ի՞նչ կուզես յինէն, մի հէգ ռամիկէն,

Վա՛խ ես թըշուառ եմ, դուն մ'ըլլար թշուառ,
Գըլխոյդ չեմ թափեր անէծք ու օրեր ·
Սիրտս աճիւն դառնայ սիրովդ հըրավառ,
Իսկ դուն երջանիկ ապրէ շատ օրեր :

∴

Ռամիկ չե՛ս, այլ մա՛րդ, Աստուծո՛յ պատկեր,
Որո՞ւ կը վայլեն, անէծք, ո՞վ յիմար · · ·
Է՞ր կնոջ քծնիս, ո՞ղջ ես թէ սատկեր,
Մեզ հարո՞ւստ, աղքա՞տ, ո՞ր կինն է յարմար :

—Ո՛չ ծաղիկ, ո՛չ վարդ, ո՛չ մի բու, ջղջիկ,
Ո՛չ թէ կրից զոհ ըլլալու համար,
Տանտիկին ընկեր ու մի կոյս աղջիկ,
Լո՛ւր, մարդ ըլլողին, այն կինն է յարմար։

Յորդոր պուէտիս քեզ առ ուղղեցոյց,
Ժպտէ՛, ո՛վ ռամիկ, թող լայ բուրճակ.
Կարծես թէ վիճա՞կն այրն ազնիւ կացոյց,
—Ո՛չ. այլ վաստակ, քիրտն, այլ մարդն ըզվիճակ։



## ՄՈԼՈՐԵԱԼ ԳԱՌՆՈՒԿԸ

—

Մոլորեալ գառնուկդ եմ,
Յիսո՛ւս իմ Յիսո՛ւս.
Փուշ ու տատասկի մէջ,
Իմ միակ յոյսըս։
Օր մը... ո՛հ ինչ օր էր,
Արշալոյսին մօտ
Ցանգին քովերն ելայ
Ծարել դալար խոտ։
Մօրենւոյ թուփերը,
Վա՛խ որ թաւուտ չէն.
Անգութ գայլերն եկան,
Թուփերու մէջէն։
Եկո՛ւ, եկո՛ւ բախին,
Կարկաչիւն առուակք.
Կը հոսին մեղմաբար,
Եղրեւաննեայ տակ։
Եկո՛ւ վարի ձորը,
Սոխակներով լի,
Ուր ամէն օրն ողջոյն,
Արփին կը փայլի։
Անուշիկ հովիւս,
Ես գիտեմ մեղայ.
Զիս սարսոյց փորձիչս,
Փարախէդ փախայ,

Մահուան շուքի ձորն եմ,
Չորս դիս ապառաժ.
Գիտեմ պիտի սահիմ,
Իմ ոտքերս անվարժ ։
Աշխարհն է այն ձորը,
Կիրքերս ալ գայլեր.
Մութ յանդուգն դժոխոց,
Կը գլորեն զիս մեղքեր ։
Ա՜հ ես վաստակեալ եմ,
Զիս ո՞չ հանգուցես.
Խոնջեալ բեռնաւորիս,
Ո՞չ հանգիստ տայես ։
Մի՛ թողուր դառնուկըդ,
Ըզգամիկն ալդէս.
Թող տեսնէ դէմքիդ լոյս,
Սուրբերուն հանդէս ։
Եկո՛ւ, ո՜վ իմ յոյսըս,
Բարի Յիսուսըս.
Այս խոր խաւարին մէջ,
Իմ անշէջ լոյսըս ։
Եկո՛ւ, ո՜վ հովիւըս,
Զիս փարախդ տար.
Քու գրկէդ հեռու ես,
Կուլամ անդադար ։



# ՄԱՀՏԵՍԻ ՏԱՏ ԱՄԻՐԱՅ

—

Լայնբաց թեւերդ, ո՜վ հոգիս, ել վե՛ր, յերկինս սաւառնէ,
Թող զայս երկիր հիդութեանց, վերն անմահից գաւառն է,
Ողջերն երգող շատ ունին, Ննջողն երգեմ ես յաւէտ
Որ յետ մահու վերծնմէ յեղիւսեան դաշտ քրքմուէտ.
Այլ թէ երգել նկրտիմ զանդուլ վաստակ դիւցազանց՝
Անցեալ աւուրց շարքին մէջ է պէտք ինձ այր գերազանց,
Ո՜վ դու Հայոց փառքն անճառ, Մահտեսի Տատ ամիրայ
Ե՛ն, հայն ինչպէ՛ս Օսմանցւոց ձգեց միշտ սէրն իւր վերայ,

* * *

Ահա կանգնիմ, ո՜վ պուէտ, լուծել գաղտնեացն այս հանգոյց
Որ ցարդ փառօք ճոխացեալ 'ի ծոց շիրմին զիս հանգոյց.
Եթէ տենչայ Հայն ըլլալ համակրանաց արժանի,
Աշխատութեամբ պէտք է որ գիշեր ցերեկ տարժանի.
Երեք արքայք մեծազօր զիս պատուեցին լիառատ,
Սուլդան Սէլիմն ալ տուաւ ինձ՝ շնորհացն իւր «Պէրաթ».
Յետ Աստուծոյ, Սուլդանին իմ թոռներովս կը պարտինք
Մեր ստացուածքն ու մեր կեանք և յորդահոս մեր քրտինք,
Առանց ռամիկ ըլլալու գործն ու վաստակ սիրեցի
Ճակատագրին խիստ օրէնք եւ հաճութեամբ կրեցի,
Ես եմ ծագմամբ Անեցի, Ակնայ գիւղէն կամարկապ,
Վաղնջական մի սերունդ և գերդաստան հոյակապ,
Նոյն իսկ տղայ հասակէս ճարտար ձեռացս մէջ դարձան
Ոսկին ու գանձ դիւրաթեք՝ մէյմէկ անդրի կամ արձան,

Խորհեց Արթին Երկանեան հարթել Ակնայ դարեւանդ ,
Եղայ զուգին յարդարող և երկրաչափ մանաւանդ ,
Եւ 'ի դարձիս 'ի Պոլիս աշխատեցայ բաւ կարգի
Մերթ ազօրիք նորոգել , մերթ գտնել բան մի յարգի ։
Իմ կառուցած ջաղացներս բարւոք ալիւր աղացին ,
Եւրոպացւոց վարպետներ հանճարիս քով կաղացին ։
Նորոգեցի ժամացոյց , հնարեցի մեքենայ ,
Ով աշխատիլ չը գիտեր՝ մարդ ապրիլ հեգ է նա ։
Այլ ո՛հ կենացս արշալոյս փոթորկեցին մութ ամպեր ,
Տառապեցայ խօթագին , ցաւ կրեցի դժոխըմբեր ·
Տագնապ մահու զիս պատեց փշրաս ջաղացքն յԱնխափան ,
Այլ ցաւերըս շուտ մեղմեց հըզօր Աստուած չարխափան ։
Նորոգուեցայ զերթ փիւնիկ , մարմնոս նոր մորթ զգեցայ ,
Մոռցայ կըրած տագնապներս չեմ գիտեր ի՛նչ է ցաւ ։
Աչքիս լոյսը կրկնելով եղաւ մի նոր մանրացոյց ,
Նըբին գործեր սկսայ սուր տեսութեամբ թափանցոյց ·
Հիւսէյն փաշա մարդ հանեց ճարտարութեանս 'ի խնդիր ,
Նոր ոճով նոր մեքենայ հնարեցի (սիլինտիր) ։
Զոյգ ընդ փափէն ես գլտայ անուաւոր մի նաւակ ,
Արեւմտեայք մի պարծիք արեւելից եմ զաւակ ։
Եւ զիս Խաշիտ Էֆէնտի ներկայացուց Սուլթանին ,
«Այս է , բաւ ։ իրաւամբ հնարքներու բնտանին ,
Մի ճարտար հայ հըպատակ , այլ որ բանիւ համառօտ ,
Բան զոտարին գերազանց ըրաւ , ո՛վ կայսր , մեր վառօդ ։
Առաս էր սիրտ Սուլթանին իւր շընորհաց նախընծայ
Իւր գերագոյն գըթութեամբ վառօդապետ կոչեցայ ։
Ո՞ւր է սահման գործոցին , հանճարն ըսէք կը կասի՛ ,
Ահա հիմնեմ գործարան անխիւ սաւոյ , կերպասի ,
Եւ Վեհափառ իմ Տէրս ալ գործքս պատուել կամեցաւ ,



Իմ ձեռագործ կերպասէս իւր վերարկուն ըզգեցաւ ։
Այսպէս փառօք ճոխացեալ հասաւ կենացս ապարէզ ,
Եւ զաչս 'ի մահ խըփելով կը մեկնէի յաշխարհէս ·
Այլ տխրութեամբ լըճացեալ , այլ մըթաքող իմ աչեր ·
Կաթկըթեցին 'ի գետին յորդ արտասուք ջերմաջեր ,
Զի կրօնից սրն մի վէճ յուզէր զազգն իմ երկպառակ ,
Եւ ո՛վ կընար , ո՛վ մեղմել զայս պառուհաս երկնառաք ։
Արիւն հոսեց իմ սրտէս , միայն այս էր սրտիս ցաւ ,
Երանութեանն իմ կենաց միայն այս բան պակասեցաւ ,
Երեսանկեալ պաղատիմ, ողորմէ ինձ , ո՛վ Աստուած ,
Ո՛հ գըթութեամբդ գագրեցուր ազնիւ ազգիս զայս հերձուած ․
Անէ՛ծք ու վա՜յ կը լսեմ մեզ օրհնութեամբ քու լեցուր ,
Առնլութեամբ լի սրտեր քու սուրբ սիրովդ հաշտեցուր ·
Զայս իղձ յաւէրժ քանդակուի շիրմիս վրայ Միջագիւղ ,
Եւ թող ցրուին հերձուածոց ապագային վախ , երկիւղ ։

## ՀՐԱԺԵՇՏ ՊՈՒԷՏԻՆ

Կուրցո՛ւր պլուլպլուլը, զայն մի՛ մեռցըներ,
Տանջէ՛ պուլէտն ալ, արեւն մի՛ մարեր ·
Կուրցո՛ւր պլուլպլուլը, անոյշ թող երգէ,
Կուրնալ պուէտին՝ երգելն ալ փառք է ։
Երգել մանաւանդ վաստակ ու քրտունք,
Ռամիկն յաշխարհի առնեն զուարթունք ·
Ահա ես պլուլպլուլ, կուրցայ, երգեցի,
Ռամիկ հէգ պուէտ, քեզ զայս տաղեցի ։
Տուի գլխիկըս համբակ քընարին,
Ուր որ մարմըրող աչուխս խոնարհին ·
Հազիւ իմ մատունք մի թել ցընցեցին,
Ահա թրթռուն լարեր ցընծացին ։
Ցընծո՛ւմ ու ցընծո՛ւմ, աշխարհ, արարատ,
Ցընծո՛ւմ թող գոչեն, սրտերն անարատ ·
Ցընծո՛ւմ ու ցընծո՛ւմ, ցընծո՛ւմ աշխարհի,
Ցընծա՛ վաստակւոր, ցընծա՛ մարդ բարի ·
Ցընծումն ալ չըթանցս ո՛չ եւս դադարի,
Ցընծա՛ ո՛վ ռամիկ, ցընծմամբ մնա՛ բարի ։

5 ՂՐՈՒՇ